ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հունիսի 2022 թվականի N 240 -Ա

«ՍԻՍԻԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՉՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲՈՒԺԱԿԱՆ ԳԾՈՎ ՓՈԽՏՆՕՐԵՆ ՎԱՐԴՈՒՇ ԹԵՎԱՆՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ, 161-րդ և 163-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով «Սիսիանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ա. Գրիգորյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. «Սիսիանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Անիկ Գրիգորյանին 2022 թվականի հունիսի 27-ից հուլիսի 13-ը ներառյալ տրամադրել 2021-2022 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն և լրացուցիչ արձակուրդի չօգտագործված մասը՝ 12 աշխատանքային օր:

2. Արձակուրդում գտնվելու ընթացքում «Սիսիանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պարտականությունների կատարումը հանձնարարել բուժական գծով փոխտնօրեն Վարդուշ Թևանյանին:

23.06.2022

X

ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2022թ. հունիսի 23
ք. Կապան